

# ԱՃԻԱՏԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

(Պրօֆ. Դր. Կ. Հելտի)

## I

Աշխատելու արուեստը բոլոր արուեստներից ամենազվածորն է, որովհետև, եթէ մարդ ուղիղ մաքով այդ հասկանալ կարողանայ, այն ժամանակ միւս բոլոր գիտութիւններն անսահման կերպով կդիւրանան։ Չնայած դորան, համեմատական չափով շատ քչերը ուղիղ աշխատել գիտեն և այդ այն ժամանակ, երբ «աշխատանքի» և «աշխատաւորների» մասին աւելի քան երթեք խօսւում է։ Յատկապէս այդ արուեստի տարածումը ու աճումը խիստ կերպով աջրի չէ ընկնում, այլ ընդհակառակը, աւելի շուտ բոլորը ծգուում են որքան հնարաւոր է քիչ աշխատել կեանքի մեջ, իսկ սորա ֆացած միւս մասը հանգստութեան նուիրել։

Արդ, ուրեմն, աշխատանք և հանգիստ—իրար հակապատկեմը են և միմեանց չնշում են։ Ամենից առաջ քննութեան արժանին այս է, որովհետև աշխատանքը լոկ գովելը, որի համար իւրաքանչիւր ոք պատրաստ է, աշխատելու ցանկութիւն չէ զարթեցնում։ Եւ քանի որ աշխատելու մեջ չկամութիւնը իրրե մի տարածուած չարիք, —իրրե մի հիւանդութիւն կֆայ ներկայ ժողովրդեան համար, և իւրաքանչիւր ոք աւելի շուտ քան կարելի է տեսականապէս գոված իրը գործնականապէս ձեռք բերել կաշխատէ, սոցիալական զրութեան որևէ բարելաւման մասին խօսք լինել չի կարող։ Այդ իրօք կատարելապէս անքժշկելի կմնար, եթէ դոքա հակադիր իրեր լինեին։

Բայց մաոդիալին ամեն մի սիրտ հանգստութեան է կա-

բօսում։ Ամենաչնչին արարածն ու հոգով աղքատը ճանաչում է այդ կարիքը և բարձրաթռիչ հոգին անդուլ աշխատանք չէ փնտրում։ Նոյն իսկ մարդու երևակայութիւնը ապադայ երշանիկ կեանքի համար ուրիշ ոչ մի յարմար խօսք չէ դտել քան «յաւիաենական հանդիատը»։ Եթէ աշխատելը կարեոր է և հանդիսատը նորա հակադիրն է, այն ժամանակ «ճակատիդ քըրատինքով պէտք է քո հացն ուտեսա իսկապէս մի դառն անէծք է և երկիրս կատարելապէս արտասունքի հովիս։ Որովհետև մարդկային ցեղի մէջ շատ քշերը կարող են միշտ «մարդուն արժանի» կեանք վարել, և սոքա, որոնց իսկապէս այդ անէծքը վերաբերում է, նորանով են կատարում, որ նոքա իրենց նմաններին աշխատել են ստիպում և աշխատանքի սարկութեան մէջ պահում։ Եւ իրօք այդ հայեացքն են ունեցել հին աշխարհի դիտնականները։ Կոպիտ, լուսահատ աշխատելու սարկութիւնը շատերից միայն մէկին է միջոց տալիս ըստ ամենայնի կրթուած ազատ քաղաքացու կեանք վարել, մինչեւ ժողովուրդները մեր դարում ունին մի մեծ հասարակալետութիւն, որին զեկավարում է մինչև իսկ քրիստոնեայ հոգեւորականութիւնը աւետարանը ձեռքին, այն միտքը պաշտպանելու, որ մարդկային որոշ ցեղ միւսների համար ժառանգարար աշխատանքի է դատապարտուած։ Քաղաքակրթութիւնը ամում է միայն հարրատութեան հողի վերայ, հարստութիւնը միայն դրամագիսի միշոյով, իսկ վերջինս շահագործութեամբ նողա, որոնք աշխատանքի համար արդար վաստակ չեն ստանում,—ergo անարդարութիւնից։ Սոքա նախադասութիւններ են, որոնք քննութեան հիմնական են կազմում։ Մենք այդ տողերի յարաբերաւական կամ կատարեալ ճշմարտութիւնը չենք ուզում ցցյց տալ, այլ միայն այսքանը հաստատել՝ եթէ բոլորը ուղիղ աշխատեն, այն ժամանակ այսպէս կօշուած սոցիալական հարցը վճռուած կլինի, և ուրիշ ոչ մի ճանապարհով նա չի լուծուի։ Լոկ միայն ճնշմումք սակայն շատ դժուար, երբեկցէ կարող է այդ կատարուել, եթէ նոյն իսկ մի որևէ ճնշման բոլոր ֆիզիքական միջոցները ձեռքի տակ ունենանք, դարձեալ ոչ մի արդիւնաւոր աշխատանք չի լինիլ։

Ուրեմն, պէտք է մարդկանց մէջ ղէպի աշխատանքը սէր զարթեցնել և դորանով մենք «մանկավարժական» իսկական հողի վերայ ենք տեղափոխւում:

Աշխատելու հաճոյքը տռաջ կդայ ոչ թէ ուսուցմամբ և կամ օրինակով, այլ խորհրդով և փորձառութեամբ։ Իսկ փորձառութիւնը հետեւեալն է ցոյց տալիս իւրաքանչիւր մէկի, որը իւր վերայ փորձել է կամենում։

Ամենից առաջ փնտրած հանգստութիւնը ոչ թէ հոգւոյ և մարմնի կատարեալ կամ կարելիին չափ մեծ անգործութեան մէջ է, այլ ընդհակառակը՝ երկուսի էլ չափաւոր կանոնաւոր գործունէութեան մէջ է դանեւում։ Մարդու ամբողջ ընութիւնը գործունէութեան է յարմարեցրած և նա դառն կերպով պատճեւում է, եթէ այդ փոխել է կամենում։ Ճշմարիտ է, նա հանգստութեան գրախտից դուրս է ծգուած, բայց Աստուած նորան աշխատելու պատռեր է տուել հետն էլ դորա հատմար հարկաւոր սիօփանքը։ Այդ պատճառով իսկական հանգստութիւնը առաջ է գալիս միայն գործունէութեան մէջ, մի օրեւէ աշխատանքի յաջող երրը մտքով տեսնելու մէջ, օրեւէ ժանր խնդրի լուծման մէջ, մարմնի բնական հանգստութեան ըստիներում, ամենօրուայ քնի մէջ, կերակուր ուտելու ժամանակ և կիրավնօրեայ անփոխարինելի հանգստութեան—օազիսի մէջ։ Գործունէութեան այսպիսի մի հաստատուն, օգտակար և միայն բնական գաղաքումներով ընդհաատաւած գրութիւնն է երջանիկը, որը երկրի վերայ միայն գոյութիւն ունի, մարդ արտաքին ուրիշ ոչ մի երջանկութիւն չպէտք է ցանկանայ։ Այս, նոյն իսկ կարելի է մի քայլ ևս առաջ գնալ և ասել՝ գործունէութեան բնութիւնից շատ բան չէ կախուած։ Խլրաքանչիւր իսկական գործունէութեան, որը լոկ խաղալիք չէ, հետաքրքիր լինելու յատակութիւն ունի, հէնց որ մարդ լուրջ կերպով նորա մէջ է խորասուզում, ոչ թէ գործունէութեան եղանակն է երջանիկ դարձնում, այլ գործելու և յաջողութիւն ունենալու ուրախութիւնը։ Ամենամեծ գժրաղջութիւնը, որ գոյութիւն ունի, առանց աշխատանքի և առանց սորա պտղի՝ իւր վախճանում կանգնած կեանքն է, Ուստի կայ և պէտք է լինի-

իրաւունք աշխատանքի վերայ. առ նոյն իսկ մարդկային բոլոր իրաւունքներից նախնականն է:

«Անդործները աշխարհիս վերայ ճշմարիտ դժբախտներն են: Բայց դոքա այնքան շատ են և աւելի բարձր դասակարգի մէջ քան ստորին, որոնց կարիքը դէպի աշխատանք է մղում, մինչդեռ ուրիշները կեղծ կրթութեան, նախապաշարմոնքի և ամենազօրեղ սովորութիւնների շնորհիւ, որոնք որոշ շրջաններում սեպհական աշխատանքը մերժում են, համարեա այդ անցյա և ժառանգական մեծ դժբաղդութեանն են դատապարտուած: Մենք տեսնում ենք, այո՛, ամեն տարի նոցա ներքին դասարկութիւնը և ծանծրոյթը մեր լեռներն ու ամառանոցները աեղափախուած, որոնցից նոքա իզուր կազդուրումն են սպասում: Դեռ ևս ամբողջ ամառը բաւական է գոնեա իրենց հիւանդութիւնից ծագած անգործութիւնը Փիղիքական որ և է շանքի շնորհիւ առողջացնելու. զորանից լետոյ պէտք է նոքա ձմեռն ևս անցնեն, և մօտիկ ապագայում հիւանդանոցները, — որոնց համար են համարեա ստեղծել նոքա մեր գեղեցիկ դրամները, — բայց պիտի լինին սմբողջ տարին այդպիսի անհանդիստ մարդկանց համար, որոնք ամեն տեղ հանգատութիւն են փրնտրում և ոչ մի տեղ չեն գտնում, — որովհետեւ նոքա այդ աշխատանքի մէջ չեն փնտրում: «Վեց օր պէտք է դու աշխաեսս», ոչ պակաս և ոչ աւելի: Մեր ժամանակի շղային հիւանդութիւններից շատերը այս դեղատոմսով պէտք է բրժկաւին, եթէ որ նոքա անդործ ծնողների սերունդի անէծք չեն և ամարանոցային ու խելագարների բժշկներից շատերը նոցա վերայ իրենց փորձերը չեն կատարում: Կեանքն ընդհանրապէս մարդ չպէտք է «ճաշակէ», այլ պէտք է պտղաբեր դարձնէ: Ով այդ չգիտէ, նա արդէն իւր հոգեկան առողջութիւնը կորցըրել է, և անկարելի է, որ նա մարմնականն ևս այնքան պահել կարողանայ քան այդ բնական լատկութեանց շնորհիւ և կեանքի ուղիղ եղանակով կարելի կինի<sup>1)</sup>: Մեր

1) Գործունեայ մարդկանցից մէկը՝ լէվինգստոնն ասում է. «Ճակատի քրտինքը, երբ մարդ Աստուծոյ համար է աշխատում, ամրացնում է ջղերը», և մեր ժամանակի նշանաւոր մի գիանակաց.

կեանքը տեսում է 70 կամ շատը 80 տարի և եթէ նա զանքի և աշխատանքի մէջ է եղել, ապա ուկեմն խիստ օգտակար է եղել։ Ալդակս պէտք է հնչէ առածք։ Գուցէ այդ էլ նորա սկզբնական իմաստի մէջ է դտնւում։

Իսկապէս մենք լաւ ենք դործում, հէնց որ մի նշգրիտ սահման ենք որոշում։ Բոլոր աշխատանքները միմեանց նման չեն, կայ և երեսութական աշխատանք, այսինքն այնպիսին, որ երեսյթի վերայ է հիմնուած կամ թէ չէ առերևոյթ է ձեռքի տակ։ Մի մասը այսպէս ասած «կանանց ծեռադորձների», որը լոկ միայն զինւորական խաղ է, ինչպէս որ սոքա սկզբում առաջ են եկել, «արուեստներին» վերաբերեալ զրադալունքների մեջ մասը, որը կայանում է դաշնամուրի անբաւարար և անպատճ նուագելուն մէջ, որսի և այսպէս ասած «զուարճութիւնների» կարևոր մի մասը, նոյնպէս և տմենաքիչը սեպհական կարողութեան և տնտեսութիւնը» անդամ չէ պատկանում գորան։ Խոհեմ և գործունեայ մարդը պարուաւոր է մի աւելի գոհացուցիչ բան փնտրել<sup>1)</sup>։

Հէնց այդ է պատճառը թէ ինչու մեքենաների վերայի աշխատանքը, մեքենան և հատ ու կտոր աշխատանքները ընդհանրսպէս այդքան քիչ են բաւականութիւն տալիս, և արուեստուոր կամ երկրադործը աւելի դոհ է քան գործարանի բա-

կցում է դորան, «Մարդ կարող է խղճով հանգիստ լինել հոգւոյ անդադրում աշխատանքի մէջ»։ Երկուսն էլ թէև խօսում են իրենց սեպհական աշխատանքից, բայց յայտնապէս սեպհական փորձառութեան հիման վերայ։

1) Շուտքիայի առանձնայատուկ Թլատուիս քահանան իւր երկրի մի սպայի մասին հետ և եալն է պատմում, որը դքսի համար աննպատակ կօշկակարութեան մէջ իրեն դժբաղդ էր զգում և իւր ցաւի պատճառները չէր ճանաչում։ Նա համոզեց սպային նորանով, որ մի փոքրիկ աղջիկ կանչեց և խոստացաւ տալ նորան մի ֆեօրին, եթէ աղջիկը մի ամբողջ օր, արծաթեայ գդալը ձեռքին աթոռի վերայ նստած կմնայ, ինչպէս որ նա գոշակել էր, կէս ժամ չանցած, ձգեց աղջիկը ձեռքից գդալը և ասաց, որ այդպիսի մի անօգուտ աշխատանք չի կատարի և չէ հաւատում, որ գորա համար անպատճառ կվարձատրուի։ Ահա այդ է պատճառը, թէ ինչն մարդկանցից շատերը իրնց «աշխատանքի» մէջ ուրախութիւն չեն գտնում։ Այդ էլ նոյն օրինակի համար է։

նուռորը, որի պատճառով և սօցիալական շարժումներն են առաջ և կել։ Այդ բանու որները իրենց աշխատանքի արդիւնքը շատ քիչ են զանում։ Մեքենան աշխատանք է. մարդու միջան նորա ենթագրեալ մի գործիքն է կամ միշտ միմիայն նորա որևէ պատահակն է ուղղում, սակայն մի ամբողջ ժամացցյ չէ արտադրում նա, որը արուեստի մի ուրախալի արդասիք, մարդկալին նշմարիտ աշխատանքի մի վաստակ է։ Այսպիսի մի մեքենական աշխատանք մեղանչում է մարդկային արժանապատութեան մասին ունեցած բնական հասկացողութեան դէմ, որն ամենաչնչին իրին յատուկ է, սակայն նշմարտապէս նորան բաւականութիւն տալ չէ կարողանում։

Այն աշխատաւորներն են, ընդհակառակ, ամենից երշանիկը, որոնք ամբողջովին իրենց աշխատանքի մէջ են խորասուղուում, նորանով բարձրանալ կարողանալու, արուեստագէտները՝ որոնց հոգին ամբողջովին իրենց առարկալով լեցուած է, երբ նոքան նորան ըմբռուում և ներկայացնում են, զիտնականները՝ որոնք բացի իրենց առարկալով ուրիշ բանի համար մի ըոպէ ժամանակ չունին։ Այս, նոյն իսկ բոլոր ամուսիններից որինակելիները, որոնք միասին մի վոգրիկ գործունէութեան շրջանում, իրենց համար փոքրիկ աշխարհ են ստեղծել։

Դոքա բոլորը—գուցէ անաչառ վերցրած նոյն իսկ անարդար կերպով—ունեն աշխատովթեան զգացմունքը, աշխարհին ոչ թէ խաղ՝ այլ նշմարիտ, օգտակար, հարկաւոր աշխատանք տալու. համար և նոցանից շատերը այդպիսի յարատե, լոգնեցուցիչ և գուցէ նոյն իսկ Փիդիքապէս քիչ առողջ գործունէութեան մէջ հասակի ամենաբարձր աստիճանին են հասնում, մինչեռ քիչ զրայուած բարձր դասակարգի մարդիկ և նորածեութիւն սիրող կանալք, մի և նոյն ժամանուկ ամենից անօգուտները, սկզբունքով ներկայ դարուս ամենից քիչ աշխատող մարդկալին դասակարգն են ներկայացնում և միշտ իրենց առողջութիւնը վերսկանգնելով են զրայուած։

Ամենից առաջ, ալսօր ինչ որ մեր աշխարհին հարկաւոր է, փորձառութեան և այն մտածողութեան ընդհանրացումն է, որ առանց բացառութեան, բոլոր մարդկանց մարմնական և հո-

գեղոր առողջութեան համար կարեսը — հետեապէս նոցա երշանկութիւնն չափաւոր աշխատանքն է:

Սորանից հաստատապէս հեակեռւմ է, որ կոչումով դատարկաշրջիկները ոչ թէ մի նոխամեծար, ռականաւոր դասակարդի են պատկանում, այլ նոցա վերալ պէտք է նաև իրեւ հոդեապէս անկատար կամ վատառողջ մարդկանց վիրայ, որոնք ուղիղ կենցաղավարութիւնը կորցրել են: Հենց որ սովորութիւնը, որ ընդհանուր, հաստատուն մի համոզման արտալուտութիւն է, նոցա մէջ լալանուած կինի, այդ ժամանակ և միայն այդ ժամանակ աշխարհի համար նոր և լաւ դարեշրջան կսկսուի: Բայց մինչ այդ նորան վնասում է մէկի անպատշաճ և միւսի անբաւական աշխատանքը, որոնք երկուստէք պայմանաւորուում են, և դեռ հարց է թէ այդ երկու կողմերից ո՞ն արդարապէս աւելի դժբաղդն է:

Ինչո՞ւ համար են ալս մաքերը, հարցնում ենք, որոնք հաղարաւոր տարիների վորձառութեան հիմք ունին, որոնց իւրաքանչիւր ոք իւր վերայ տմենայն օր, երբ նա աշխատում կամ չէ աշխատում, փորձել կարող է, և բոլոր կրօններն ու փիլիսոփայութիւնները քարոզում են այնպիսի ձեռվ, որ, օրինակ, դեռ ևս հազարաւոր «կանայք» կան, որոնք աստուածաշնչի վերայ մեծ լուս են դնում, յափանական դատաստանը շատ եռանդով պաշտպանում են, բայց խնդի զարմանալի հանգստութեամբ մի բոլորովին պարզ պատուիրանի հակառակ, ամենաշատը մի օր — աշխատում են և վեց օր իրենց հանգստութեան նուիրում: Դվանաւորապէս այդ առաջ է գալիս աշխատանքի անարդար բաժանումից և կարգաւորումից, որն անպայման պարզապէս այդ ձեռվ բեռը կդառնայ, որով և մենք մեր բնադրի վերնադրին ենք վերադառնում:

Այստեղ միայն մի ճշմարիս հրահանգ հնարաւոր է այն մարդու դէմ, որը սկզբունքով մի որ և է աշխատանքի կարիքի համոզումն ունի և հանույթով այն սկսել կը կամենար, եթէ զարմանալի կերպով նորան միշտ մի որևէ բան չխանգարէք:

(վերջը միա անգամ)

ԳԵՐՄ. Թ. ԱՐՑԱԿ. Վ. ՍՄԲԱՑԵԱՆՑ